



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Ուրբաթ, 3 Ապրիլ. Մայր Տաճարին մէջ պաշտօնեցան Մեծ Պահոց «Արեւագալի» եւ «Խաղաղական» վերջին ժամերգութիւնները:

Շաբաթ 4 Ապրիլ. Յիշատակ Յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրլխաղիր: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Իրան-Իսրայէլ պատերազմական իրավիճակին եւ սահմանուած խիստ սահմանափակումներուն պատճառով Մաղկազարդի նախատօնակը կէսօրէ ետք կատարուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ՝ նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Նոյն օրը, ժամը 15:30-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան քանի մը հոգեւոր հայրեր եւ սարկաւազներ, գլխաւորութեամբ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի, առանց «Հրաշափառ»-ի մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար: Պատանատեղւոյն երկրպագելէ ետք անոնք բարձրացան Հայոց վերնամաստուն՝ երկրորդ Գողգոթա, ուր կատարուեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը: Այնուհետեւ, փոքրաթիւ միաբաններով, տաճարէն ներս տեղի ունեցաւ Տնօրինական Սրբատեղեաց ալցելութեան թափօր: Թափօրապետն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Կիրակի, 5 Ապրիլ. Մաղկազարդ: Առաւօտեան ժամը 8:00-ին, Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Առաւօտեան ժամերգութիւն, ապա մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Սուրբ Պատարագէն ետք, եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ «Անդաստան»՝ նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր: Այնուհետեւ, Միաբանութիւնը, ժառանգաւոր սաները եւ հաւատացեալ ժողովուրդը թափօրով եւ շարականի երգեցողութեամբ ուղղուեցան դէպի «Ովսանայի քար», ուր ընթերցուեցաւ օրուան Աւետարանը: Ապա, հանդիսապետ Լուսարարապետ Սրբազան Հայրը իր սրտի խօսքով եւ «Պահպանիչ»-ով արձակեց ներ-

կաները:

Մաղկազարդի տօնին առիթով, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան առաջին մուտքը Ս. Յարութեան Տաճար տեղի շունեցաւ՝ պատերազմական պայմաններուն հետեւանքով սահմանուած խիստ սահմանափակումներուն պատճառով:

Ժամը 9:00-ին, Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ, քանի մը հոգեւոր հայրեր եւ սարկաւազներ կատարեցին Մաղկազարդի միայն երկրորդ մուտքը Ս. Յարութեան Տաճար: «Ճաշու» ժամերգութենէն ետք, Հայոց վերնամաստան մէջ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ՝ Տ. Սեդրակ Սրբ. Անտոնեանի ձեռամբ:

Սուրբ Պատարագէն ետք, հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի, փոքրաթիւ միաբան հայրերով Քրիստոսի Ս. Գերգմանի շուրջ կատարուեցաւ եռադարձ թափօր՝ երկու դարձ Ս. Գերգմանին շուրջ եւ մէկ դարձ Պատանատեղւոյն շուրջ: Հայոց թափօրին կը հետեւէին նաեւ Ղպտի եւ Ասորի համայնքները՝ որպէս սրբատեղեաց մէջ Հայոց հետեւակներ: Երրորդ դարձին, Ղպտիներու խորանին մօտ նախատեսուած «Անդաստան»-ի արարողութիւնը զանց առնուեցաւ: Արարողութիւնները իրենց լրումին հասան Հայոց տեսչարանին առջեւ՝ Ուշաթափման սրբավայրին դիմաց: Ոստիկանատան առջեւէն թափօրով եւ երգեցողութեամբ պատրիարքարան բարձրանալը եւս այս տարի տեղի չունեցաւ:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դոնբասցէք»-ի արարողութեան նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան Սրբազան Հայրը:

«Դոնբասցէք»-ի արարողութիւն կատարուեցաւ նաեւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ:

Աւագ Երեքշաբթի, 7 Ապրիլ. Յիշատակ Տասըն Կուսանաց: Իրան-Իսրայէլ պատերազմական իրավիճակին եւ սահմանուած խիստ սահմանափակումներուն պատճառով, Աւագ Երեքշաբթիին յատուկ հանդիսաւոր արարողութիւնները չկատարուեցան նախորդ տարիներու նման, այլ սահմանա-

փակուեցան դռնփակ կերպով՝ փոքրաթիվ միաբան հայրերու, սարկաւագներու, ժառանգաւոր սաներու եւ տեղւոյն ծառայող հոգեւորականներու մասնակցութեամբ:

Առաւօտեան ժամը 7:00-ին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Առաւօտեան ժամերգութիւն: Այնուհետեւ, ժամը 9:00-ին, հանդիսապետութեամբ Տ. Տիրան Վրդ. Յակոբեանի, քանի մը հոգեւոր հայրեր, սարկաւագներ եւ ժառանգաւոր սաներ ուղղուեցան դէպի Ս. Յարութեան Տաճար: Հստ սովորութեան՝ օրուան Ս. Պատարագը պէտք է մատուցուէր Տաճարին գաւիթը գտնուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ, սակայն պատերազմական եւ անվտանգութեան նկատառումներով այն մատուցուեցաւ Տաճարէն ներս՝ Հայոց Երկրորդ Գողգոթայի Սուրբ Սեղանին վրայ: Պատարագեց Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Սուրբ Պատարագէն յետոյ, փոքրաթիվ միաբաններով, Տաճարէն ներս տեղի ունեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան ուխտաւորաց թափօր: Թափօրապետն էր Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Աւագ Հինգշաբթի, 9 Ապրիլ. (Յիշատակ վերջին ընթերցեաց): Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: «Հայր Մեր»-էն առաջ կարդացուեցաւ Ս. Բարսեղ հայրապետի Հաղորդութեան մասին ճառը՝ գերազանցօրէն վեհ եւ շինիչ խրատներով լեցուն:

Ժամը 14:30-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Ունլուայի արարողութիւն՝ հետեւողութեամբ Քրիստոսի ձեռքով Իր աշակերտներու ոտքերը լուալու օրինակին: Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան Սրբազան Հայրը մեծ վայելչութեամբ յատուկ այս օրուան համար գանձատունէն դուրս բերուած զգեստները հագած կանգնեցաւ խորանին մէջտեղ եւ իր երկու կողմերը շարքով կանգնած տասներկու Եպիսկոպոսներ ու վարդապետներ, ի նշան՝ տասներկու առաքեալներուն: Արտասանուած կանոնական աղօթքներէն ու երգուած շարականներէն ետք անոնք կարգով մօտեցան Սրբազան Հօրը, զոր իրենց ոտքերը ջուրով լուալէ ետք նաեւ իւղ քսեց անոնց վրայ, յօրինակ՝ Մարիամի կողմէ Քրիստոսի ոտքերը օծելուն: Արարողութեան վերջաւորութեան, Երուսաղէմի եւ Մերձաւոր Արեւելքի Անգլիկան եկե-

ղեցւոյ եպիսկոպոսը, այս տարի պատերազմին պատճառով ներկայ չէր, ուստի անգլերէն աւետարանի ընթերցում տեղի չունեցաւ:

Երեկոյեան ժամը 16:30-ին կատարուելիք եկեղեցական արարողութիւնն ու թափօրով երթը դէպի Քրիստոսի Առաջին Բանտ՝ Ի Ս. Հրեշտակապետաց, Զարչարանաց խորան եւ Ս. Ծառ, ապա՝ թափօրով երթը դէպի Քրիստոսի Երկրորդ Բանտ՝ Ի Ս. Փրկիչ, պատերազմական պայմաններուն պատճառով այս տարի չկատարուեցան:

Գիշերուան ժամը 7:00-ին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»: «Փառք ի բարձունս»-էն ետք Տաճարին խորհրդաւոր մթութեան մէջ «Յայսմաւուրքի Ամպիրոն»-էն քարոզեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ապա արարողութիւնը շարունակուեցաւ եւ Թէոդորոս Սրբազան Հայրը «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութեան ատեն թափօր դարձաւ Մայր Տաճարին մէջ, ապա Միաբանութիւնը երկրպագութիւն ըրաւ Խաչափայտի մասունքակիր խաչին: Արարողութիւններն իրենց լրումին հասան գիշերուան ժամը 11:30-ին:

Աւագ Ուրբաթ, 10 Ապրիլ. (Յիշատակ Զարչարանաց Խաչելութեան եւ Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի): Կէսօրէ ետք ժամը 1:15-ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման Կարգ»-ը: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Աւագ Շաբաթ, 11 Ապրիլ. (Ծրագալոյց Զատիկի): Առաւօտեան ժամը 9:00-ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնելով Աւագ Թարգման Տ. Վազգէն Վրդ. Ալէքեանի ձեռքէն:

Ժամը 11:15-ին Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը, Հ.Ն.Մ-ի եւ Հ.Մ.Հ.Մ-ի սկառւտներով եւ նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեայի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի դրան կնքումէն: Յունաց Թափօրէն ետք, մեր լուսահանը՝ Ս. Յարութեան Տաճարի առժամեայ տեսուչ Տ. Տիրան Վրդ. Յակոբեան, Յունաց Ամեն. Տ. Թէոֆիլոս Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ յետոյ դուրս տրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամատրան պա-

տըշգամին մէջ իր տեղը գրաւող Տ. Կորին Եպս. Բաղդասարեան Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց Ս. Գերեզմանի շուրջ կանգնած խուռներամ բազմութիւնը ամենագոյի ուխտաւորներուն: Ապա տեղի ունեցաւ եռադարձ թափօր: Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեալ» շարականը: Լուսահայտ Հայր Սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը:

Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները:

Վանք վերադարձին դարձեալ թափօր կազմուեցաւ՝ առաջնորդութեամբ սկառտներու նուագախումբին: Լուսահայտ՝ Տ. Տիրան Վրդ. Յակոբեան, շուրջառագեցտ, Ս. Գերեզմանէն դուրս բերուած լոյսը ապակեայ պահպանակի մէջ ի ձեռին, կը քալէր թափօրին մէջտեղէն: Դաւթի Բերդին մօտ Տ. Կորին Եպս. Բաղդասարեանին տրուեցան շուրջառ, խաչ եւ գաւազան: Շարականներու երգեցողութեամբ եւ զանգահարութեամբ թափօրը մուտք գործեց Մայր Տաճար, ուր դասին մէջ հանդիսապետ Տ. Կորին Եպս. Բաղդասարեան կարդաց Ս. Զատկական Աւետարանը եւ «Պահպանիչ»-ով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւնը Մայր Տաճարին մէջ: Ս. Պատարագը մատուցեց Տ. Արշակ Աբղ. Ղազարեան: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ նախատօնակ: Հանդիսապետն էր Տ. Կորին Եպս. Բաղդասարեան: Ապա, Միաբանութիւնը եւ դպիրներ «Այսօր յարեալ» շարականը երգելով գացին Պարտիզաթաղ, ուր տեղի ունեցաւ Տնօրհնէքի արարողութիւնը:

Ճրագալոյցի Ս. Պատարագներ մատուցուեցան նաեւ Ս. Յարութեան Տաճարին մէջ՝ Ժամարարն էր Տ. Սուրեն Քնյ. Ղազարեան, եւ ի Ս. Հրեշտակապետաց՝ պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 12 Ապրիլ.- Ս. ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ: Կէս գիշերէն ետք ժամը 2:00-ին Մայրավանքի մեծ զանգը ոտքի հանեց Միաբանութիւնը, որ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար:

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամասերն մէջ պաշտուեցաւ Ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»: Ապա միաբան հայրեր եւ Ժառանգաւոր սաներ զգեստաւորուած իջան Սուրբ Գերեզմանի շրջափակը, ուր պաշտամունքը շարունակուեցաւ եռադարձ թափօրով Գերեզմանի

եւ Պատանատեղւոյն շուրջ: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները: Թափօրի երկրորդ դարձին Ղպտիներու խորանին քովի կատարուեցաւ «Անդաստան», ապա Առաւօտեան Ժամերգութիւնը շարունակուեցաւ թափօրով շուրջ Պատանատեղւոյն, ընթերցուեցաւ Աւետարան, ապա արարողութեան վերջաւորութեան հանդիսապետ Սրբազան Հայրը «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութեան առնէ թափօր դարձաւ Քրիստոսի Լոյս Գերեզմանին շուրջ: Թափօրը վերջացաւ Հայոց տեսչարանին առջեւ:

Առաւօտեան ժամը 7:15-ին տեղի ունեցաւ Հայոց երկրորդ մուտքը Սուրբ Յարութեան Տաճար՝ հանդիսապետութեամբ Տ. Կորին Եպս. Բաղդասարեանի: «Ճաշու» Ժամերգութեան յաջորդեց Զատկական հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Սուրբ Գերեզմանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց հանդիսապետ՝ Տ. Կորին Եպս. Բաղդասարեան: Պատարագէն յետոյ Միաբանութիւնը եւ Ժառանգաւոր Սաները Ոստիկանատան առջեւէն թափօրով եւ երգեցողութեամբ, վերադարձան Մայրավանք: Օրուան տօնակատարութիւնները աւարտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի արտաքին գաւիթը՝ հանդիսապետ Սրբազան Հօր «Պահպանիչ»-ով:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական մեծահանգէս «Անդաստան»-ին:

Երկուշաբթի, 13 Ապրիլ.- Բ. օր Ս. Զատկի: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց եւ քարոզեց՝ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ս. Պատարագի վերջաւորութեան Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, իսկ Միաբան Հայրերը մասունքներով, եռադարձ թափօր դարձան, որուն աւարտին երգուեցաւ «Ճանապարհ»՝ ուխտաւորներուն բարի ճանապարհ մաղթելու համար: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Լուսարարապետ Սրբազանը բոլորին նշխար բաժնեց:

Երեքշաբթի, 14 Ապրիլ.- Գ. օր Ս. Զատկի: Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան: Ս. Պատարագէն ետք հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ վասն ամենայն ննջեցելոց:

Շաբաթ, 18 Ապրիլ.- Յիշատակ գլխատման Սրբոյն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաղ Մ. Վրդ. Ճոնատուրեան:

Կիրակի, 19 Ապրիլ.- Նոր Կիւրակէ (Կրկնագատիկ): Ըստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց լուսահան Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Կէսօրէ ետք, Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած նախատօնակին:

Երկուշաբթի, 20 Ապրիլ.- Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտեան Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ միաբան հայրերն ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը:

Ուրբաթ, 24 Ապրիլ.- Յիշատակ Սրբոց Նահատակաց մերոց, որք կատարեցան յընթաց Հայոց ցեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան: Յետ Ս. Պատարագի, Միաբանութիւնը, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, թափօրով եւ շարականի երգեցողութեամբ ուղղուեցաւ դէպի Ապրիլեան գոհերու յուշարձան, ուր տեղի ունեցաւ ոգեկոչման արարողութիւն:

Շաբաթ, 25 Ապրիլ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կէսօրէ ետք, գլխաւորութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սըրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կիրակի, 26 Ապրիլ.- Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ): Առաւօտեան ժամը 6:15-ին հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի, միաբան հայրերը մեկնեցան Ս. Յարութեան Տաճար, ուր Գիշերային եւ Առաւօտեան ժամերգու-

թիւնները պաշտուեցան մեր վերնամատրան մէջ:

Հայոց երկրորդ մուտքէն ետք Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուց եւ քարոզեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Պատարագիչ Սրբազան Հայրը Ս. Պատարագի վերջաւորութեան նախագահեց նաեւ Ս. Գերեզմանին առջեւ կատարուած «Անդաստան»-ին:

Շաբաթ, 2 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սիոն Աբղ. Թաքուշեան:

Կիրակի, 3 Մայիս.- Կարմիր Կիւրակէ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Շաբաթ, 9 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Խաղ Մ. Վրդ. Ճոնատուրեան:

Կիրակի, 10 Մայիս.- Տօն Երեւման Ս. Խաչին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը ընթերցաւ Ս. Կիրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ կայսեր եւ հանդիսապետեց «Անդաստան»-ի արարողութեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ, որուն վերելքը զետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը: Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Շաբաթ, 16 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Կիրակի, 17 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Սուրէն Քհնյ. Ղազարեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին:

Չորեքշաբթի, 20 Մայիս.- Կէսօրէ ետք, Պատարագը Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին մօտ լարուած վրանամատրան մէջ նախ Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան կատարեց Պրդծեալ Տաճարի արարողութիւն, ապա պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»-ի եւ Հսկման կարգերը եւ Առաւօտեան ժամերգութիւնը հանդիսապետութեամբ Լուսարար-

րապետ Սրբազան Հօր:

Հինգշաբթի, 21 Մայիս. Համբարձումն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտուն Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Համբարձման լեռ, ուր «Հրաշափառ»-ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս, եւ Հայկական բաժնի վրանին ներքեւ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: «Հայր մեր»-էն առաջ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք»: Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց պատարագիչ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 23 Մայիս. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Համբարձման մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան:

Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 24 Մայիս. Երկրորդ Ծաղկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

«Անդաստան»-ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 30 Մայիս. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Ս. Առաքելոց մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Երեկոյեան՝ Հոգեգալստեան նախատօնակին Ս. Յակոբ, նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցէ»-ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Կիրակի, 31 Մայիս. ՀՈԳԵԳԱԼՈՒՍ: Առաւօտուն Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի մեկնեցաւ վերջին ընթերցեց վերնատուն, ուր առաջին անգամ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ: Պատարագեց հանդիսապետ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան, որ եւ Պատարագի ընթացքին կարդաց նաեւ Յովհաննէս Ոսկեբերանի Հոգեգալստեան ներբողը:

Շաբաթ, 6 Յունիս. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կիրակի, 7 Յունիս. Ա. Կիրակի գկնի Հոգեգալստեան: Սկիզբն Յարութեան Կիրակէից եւ յիշատակ Եղիայի Մարգարէին: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Յակոբ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Նոյն օրը, երեկոյեան նախատօնակին Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 8 Յունիս. Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Սուրբ Հռիփսիմէի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Ուրբաթ, 12 Յունիս. Նախատօնակին Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 13 Յունիս. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ ելանելոյն Ս. Վիրապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէճ Վրդ. Ալոյեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին Սուրբ Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, ապա «Տէր ողորմեա» երգուեցաւ ծնրադիր:

Կիրակի, 14 Յունիս. Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

«Հայր Մեր»-էն առաջ «Հայրապետական մաղթանք»-ին նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 20 Յունիս. Սրբոցն՝ Մեծին Ներսիսի Հայրապետին մերոյ եւ Խաղայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Կիրակի, 21 Յունիս. Գ. Կիրակի գկնի Հոգեգալստեան: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն՝ մեր վերնամատրան:

մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Պատարագեց Տ. Սիրոն Աբղ. Թաքուշեան:

Ուրբաթ, 26 Յունիս. Նախատօնակիրն ի Սուրբ Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 27 Յունիս. Գիւտ նշխարաց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգշեան:

Կիրակի, 28 Յունիս. Դ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Պատարագեց Տ. Սիրոն Աբղ. Թաքուշեան:

Չորեքշաբթի, 1 Յուլիս. Նախատօնակիրն ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Կորին Եպս. Բաղդասարեան:

Հինգշաբթի, 2 Յուլիս. Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց Կիւլպէնկեան Մատենադարանի Տեսուչ՝ Տ. Ներսէճ Վրդ. Ալոյեան:

Շաբաթ, 4 Յուլիս. Սրբոցն՝ Տրդատայ Թագաւորին մերոյ եւ Աշխէն Տիկնոջն եւ Խոսրովիդիւտոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ներսէճ Վրդ. Ալոյեան:

Նոյն օրը, երեկոյեան նախատօնակիրն ի Սուրբ Հրեշտակապետաց նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Կիրակի, 5 Յուլիս. Գիւտ Տիոյ Ս. Աստուածածնի: Առաւօտեան Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրերը ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ մոտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան Ս. Պատարագը մատուցց Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան:

Ուրբաթ, 10 Յուլիս. Նախատօնակիրն ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 11 Յուլիս. Սրբոց Երկոտասան Առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ Երեքտասաներորդ Առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, Զարշարանաց խորանին վրայ: Պատարագեց Տ. Խաղ Մ. Վրդ. Ճոննտուրեան:

Կիրակի, 12 Յուլիս. Զ. Կիրակի զկնի Հոգե-

գալստեան: Բարեկենդան Վարդավառի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորին Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Սիրոն Աբղ. Թաքուշեան:

Ուրբաթ, 17 Յուլիս. Նախատօնակիրն ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 18 Յուլիս. Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ: Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի՝ Ս. Էջմիածին եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգշեան:

Երեկոյեան, Վարդավառի նախատօնակիրն ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Իրիկնադէմին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեցէի» եւ «Հսկման» արարողութիւնները: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Կիրակի, 19 Յուլիս. Վարդավառ: Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Գիշերային, Առաւօտեան եւ Ճաշու ժամերգութիւններէ ետք կատարուեցաւ օրուան «Անդաստան»-ը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին Վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Երկուշաբթի, 20 Յուլիս. Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Պատարագեց՝ Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն՝ նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Ուրբաթ, 24 Յուլիս. Նախատօնակիրն ի Սուրբ Հրեշտակապետաց նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Շաբաթ, 25 Յուլիս. Սրբոցն Թագէտսի Առաքելոյն եւ Սանդիստոյ Կուսին: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Արբակ Աբղ. Սարուխանեան:

Կիրակի, 26 Յուլիս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց Հայաստանէն ուխտաւորաբար Ս. Երկիր այցելած՝ Գուգարաց թեմի Սպիտակ քաղաքի Ս. Յարութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Վաղարշ Քհնյ. Յակոբեան: